

եթէ կանխատահման պայման ունենան՝ որ իւրաքանչիւր ընկեր առանձին և յատուկ ստորագրութեամբ յօդուածներ տան:

Ուստի եթէ արդարեւ ստոյգէ մեզ հազորդուած տեղեկութիւնն, Մշակի խմբագիր — հրատարակողին նաև խմբագրական տղիտութեան բաւական մի արդիւնք և ապացոյց հրատարակելը իրաւունք չէ՞. զի իւր թերթին մէջ՝ թէ և միայն Գ. Ա. զլսատառերով՝ իւր ստորագրութեամբ յօդուած կհրատարակէ, մինչդեռ անստորագիր ամեն յօդուած և լուր իւր խմբագրութեան և ուղղակի պատասխանատուութեան միայն կվերաբերի, զոր և ի վերջ թերթին դրած սովորական ստորագրութիւնով կհաստատէ:

Իսկ եթէ այսպիսի տղիտութեան արդիւնքը կամաւ և զիտմամբ է, Մշակի խմբագրութեան վերայ դարձեալ մինչանաւոր պակասութիւն կյաւելանայ և կծանրանայ, զոր դուցէ ինքն ևս մտածելով կարողանայ խմանալ՝ առանց մեր բացատրութեան կարօտ մնալոյ:

Ի Գ. Ա. Ն.

Ի Գ. Ա. ՆԱԿԻ.

Արարատ ամսագրի Բ-րդ թուոյն մէջ Գանձակից Չաքէոս անունով ստորագրած մի նամակի առթիւ աւելորդ չի համարեցի մի քանի խօսք ուղղել:

Չարմանալի բան է, որ մեր լրագրերի թղթակիցների մեծ մասը՝ մինչև այժմ էլ չեն կարողանում մի խոշոր սխալմունքից ազատ մնալ, ուստի՝ եթէ նոքա կամենում են մի որ և իցէ ճշմարտութիւն յայտնել, այդ ճշմարտութիւնը կորցնում են իւր իսկութիւնը՝ երբ հարցը կամ միակողմանի է քննում, կամ միայն արտաքին

երևոյթիցն է ստիպուած առանց քննելոյ երևոյթի պատճառը, կամ թէ ճշմարտութիւնը երեսին բռնած գործի հանգամանքը յարմարացնում է իւր կամքին:

Պարզեմբ մեր միտքը մի պարբերութեան դէմ:

Պ. Չաքէոսը ասումէ, «Գանձակայ ծխական ուսումնարանը, որի դասատան դռների բաց անոցը մի քանի րոպէ Բ-ի Բէր ասելու է պատաւորվում, ճշմարիտն ասեմ, մէք չկարողացանք հասկանալ թէ Պարոնը գործնով ի՞նչ է ուղում ասել, որի մասին կլնդրէի որոշակի յայտնել իւր միտքը: Իսկ պատրաստական դասատան նիւթերը անձրեւի և ձիան տակ է փթում, որի շինող վարպետը ամեն օր յաջորդի սննեակը ուխտ է գնում՝ շնորհիւ.»:

Պատրաստական դասատունը, որի համար խօսումէ Պ. Չաքէոսը, Հոգաբարձութիւնը չէր շինում ուսումնարանապատկան գումարից, այլ շինումէ մի բարեպաշտի կամաւոր նուիրատւութիւնից, որը խոստացել էր անցեալ 1875 ամի Սեպտեմբրի 7-ն՝ ընծայել 500 ռուբլ. Այդ գումարից Հոգաբարձութիւնը ստացել է կանխիկ 100 ռուբլ. իսկ մնացեալն պէտք է ստանար հետզհետէ համաձայն շինութեանը: Այդ հիման վերայ Հոգաբարձութիւնը վարպետի հետ կապակցութիւն էր արել Նոյն ամի Հոկտեմբրի 25-ին. վարպետը համաձայն իւր պայմանագրին՝ երբ սկսեց շարունակել յանձն առած շինութիւնը տեղւոյս քաղաքական իշխանութիւնը արգելեց:

Հոգաբարձութիւնը՝ (որի նախագահն է տեղական Յաջորդը, բաղկանումէ մէկ քահանայից, երկու ուսումնականից և մի վաճառականից) խորհելուց յետոյ, եկաւ այն եզրակացութեան, որ եթէ գրագրութիւն բաց անի քաղաքական իշխանութեան հետ՝ գործը կերկարի, ուստի կարեւոր համարեց այդ խնդրի լուծումն բերանացի խնդրել Պ. Նահանգապետից, բայց չյաջողվեցաւ, որից յետոյ ստիպուեց գրաւոր թղթաւութիւն խնդրել որից հարկն է, որ և իրաւունքը ստացաւ ներկայ 1876 ամի Մարտի 13-ին:

Ինչպէս վերևում ասացի, այդ դասատունը պէտք է շինվեր մէկ բարեպաշտի կամաւոր նուիր

բառաւորաբար շինութեան իրաւունքը ստա-
նալուց յետոյ՝ երբ Հոգաբարձութիւնը դիմեց
պարոնին պահանջելով խոստացած դումարից մէկ
մասը, գտաւ նորան փոխված, որն օգտաւէտ էր
համարել այդ գումարը դպրոցի անուամբ պա-
հել որ և իցէ բանկում՝ և նորա տոկոսովը պահ-
պանել դպրոցում աղքատ երեխաներ:

Այս է պատճառը՝ որ շինութեան իրեղէններն
մնացած են անիրազարծելի. եթէ Հոգաբարձու-
թիւնը ունեցել էր միջոց իւր գումարով շինելու,
գործը այդ դրութեան չէր հասնիլ, նա մանաւանդ
որ ուսումնարանը մեծ կարիք ունի պատրաստա-
կան դասատան և որի կարիքը Հոգաբարձութիւնը
կարեկցաբար է զգում: Մէք քաջայոյս եմք՝ որ
Պ. Զաքէոսը վերոյգրեալ հանգամանքների ճշը-
մարտութիւնից ստիպուած՝ կհամոզուի որ իւ-
րանից կարծուած կէտերի շնորհիւ չէ մնացել ան-
գործադրելի և հաւաստի եմք, որ միասանգամ
ազգային գրականութեան լայն ասպարիզի մէջ
իւր յօգուածներով հանդիսանալու ժամանակ՝
կաշխատի գործին հանգամանօրէն և զրականապէս
տեղեկանալ և իւր թիւր կարծիքով առիթ չլի-
նել ի զուր շփոթմունքների մէջ նեթարկել յար-
գելի ընթերցողներն:

Յ. Լ.

Յ 7 Մայիս 1876 -ի.
Ի Պահլայի.

ՍՈՒՐԷԱՆԳԱԿՔ ԲԻԻԶԱՆԴԵԱՆ
Թիւրքիաբնակ մերազնեայց Սահմանա-
դրական Երեսփոխանական Ազգ. Ընդհ-
ժողովոյ ի ներկայ ամի առաջին բաց-
ման հանդէսը արժան կհամարիմք քա-
ղել Փունջէն եւ հրատարակել:

ԱՌԱՋԻՆ ԲԱՅՈՒՄՆ
ԵՐԵՍՓՈՒԼՆԵԿԵՆ ԺՈՂՈՎՈՅ
Ի 1876 ՈՄԻ

Ամեն Ս. Պատրիարք Հայրը երէկ (Մայիս 7)
զեղեցիկ ատենախօսութեամբ մը բացաւ ազգա-
յին Երեսփոխանական ժողովոյ ատենանը, ինչոր-

կայութեան մեծագոյն մասին՝ 58 երեսփոխա-
նաց:

Նորին Սրտազնութիւնը՝ նախ քան զամենայն՝
յիշատակելով անցեալ տարւոյն մէջ վարչական
ժողովոյ՝ խորհրդոց ու հոգաբարձութեանց ար-
դիւնաւոր աշխատութիւնն ու գործակցութիւնը,
շնորհակալութիւն մատուց: Յաջողեցանք ըսաւ,
նոցա գործակցութեամբ բաւական խնդիրներ
կարգադրել, և մեր կարողութենէն վեր եղածներն
ալ ազգային ժողովոյ մատուցանելով՝ դիւրու-
թիւններ ստացանք: Յիշեց՝ Բ. Դրան իւր վրոյ
ունեցած համակրութիւնը և իւր շատ խնդրոց
դիւրութեամբ ընդունուած ու գործադրուած
միշտ և իսկ գաւառական անարժանք) պաշտօնա-
կալաց ոմանց պաշտօնանկ ըլլալը. ապա ի մասնա-
ւորի ծանոց քանի մը զխաւոր գործեր. ինչպէս՝
բազմութիւ տարիներէ հետէ մեր գաւառաբնակ
ազգայնոց զանգատանաց ու տրտնջանաց պատ-
ճառ եղող, և ազգային վարչութեանց տաղնապի
ու մտատանջութեան տեղի տուող հարստահա-
րութեանց հանրածանօթ խնդրոյն համար՝ վեր-
ջապէս անցեալներն Բ. Դուռը տաճիկ և հայ ան-
դամներէ յանձնաժողովոյ մը կազմուած լինելը,
որում յանձնուեցան՝ ըսաւ, հարստահարու-
թեանց վերաբերեալ ամեն զրեր, և մեր նախոր-
դին օրով ազգային ժողովոյ միջոցաւ խմբագրեալ
հարստահարութեանց ընդարձակ տեղեկագիրն, և
շնորհիւ անաչառ քննութեանց ու հետազօտու-
թեանց յանձնաժողովոյն՝ ամենայն զեղծմունք ու
անկարգութիւնը երևան ելան, և արդէն բաւա-
կան կարգադրութիւնը եղան և կյուսամ թէ
վերջ պիտի տրուի մեր ազգայնոց վշտաց ու տա-
ռապանաց: Կլեմ թէ, յարեց Նորին Սրտազ-
նութիւնը, այս յանձնաժողոյ առաջարկութեամբ
մասնաժողով մը կառավարութեան կողմանէ գա-
ւառները պիտի երթայ, և ամենայն ինչ պիտի
կարգադրուի ի շինութիւն և յանդրորութիւն մեր
ազգայնոց: Դարձաւ յետոյ շնորհակալութիւն
մատուց յանձնաժողովոյ ամեն և մասնաւորապէս
Հայ անդամոց: . . .

(*) Գաղաքական